

տութեան գաղափարին հետ՝ որ կը կաշկանդէր ու կը տանջէր հին Հայուն ուղիղը (Երգ. 214-38):

Օրհնութիւնն արդարեւ կը սրբէր ու տելի համարուած կերակրները (Ս. Տիմ. Գ, 5): Բայց կային՝ որ ի բնէ պիղծ ու խոտելի կը նկատուէին, եւ կը պղծէին իրենց մերձեցած ուրիշ նիւթերն ալ. եւ ասոնք զլիսաւորապէս անասունք էին: Մազղեզանց երկարմատեան դրութեամբ՝ սուրբ կենդանիք բարի արարչի մը, եւ անսուրբք կամ վնասակարք՝ չար արարչի մը գործերն էին (Եզն. 132, '45). այս պատճառաւ՝ գայլ, գորտ, մուկն, մըջիւն, օձ եւ այլ այսպիսիք՝ չար ոգւոց ընդունարան ու զգեստ համարուած էին (Փորթ. 132): Մեզ աւելի ծանօթ էին հրէական խտրութիւնք, որոց ծագումն ոմանք նոյն երկարմատեան վարդապետութեան մէջ որոնեցին: Իսկ ուրիշներ կը դնեն ազոնց մէջ կրկին նպատակ. Երբայեցիքը հեթանոսաց սեղանակցութենէ ու գայթակղութենէ հեռի պահել, եւ առողջութեան վնասող ուտեստներէ զգուշացնել (Վիգ. Ս, 615-20): Մեր հին նախնիք, եւ կրտսերներէ ոմանք անոնց հետեւելով, աւելի լայն տեսութեամբ մը կը նային մովսիսական օրինաց վրայ՝ քան Տաթեւացին